

Հ Ր Ա Մ Ա Ն N 105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«15» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 01/13/2/4608-14 գրությունը և Նարեկ Ղազարյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-18) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Նարեկ Վազգենի Ղազարյանի հետ 2014 թվականի դեկտեմբերի 15-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ